13.12.2018թ. Ք.Գյումրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՀՀ Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի նիստի

2018թ դեկտեմբերի 13-ին կայացավ ՀՀ Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի նիստը: Նիստին մասնակցեցին ներքին աուդիտի կոմիտեի անդամները հետևյալ կազմով.

Կարեն Սարուխանյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետ, նախագահ.

Վանիկ Սերոբյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական, անդամ.

Ռուբեն Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություն տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ, անդամ.

Զորիկ Խաչատրյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-հողային պետական տեսչության պետ,անդամ.

Մանուկ Մանուկյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ, անդամ:

Մուշեղ Մուրադյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ, քարտուղար:

Նիստին հրավիրված էր Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Աշոտ Շահբազյանը:

Օրակարգում՝

Ներքին աուդիտի բաժնի կողմից անցկացված թվով 30 աուդիտորական առաջադրանքների հաշվետվությունների ներկայացումն էր և քննարկումը:

Ներքին աուդիտի բաժնի պետը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ալվարի միջնակարգ դպրոց», «Զորակերտի միջնակարգ դպրոց», «Սարագյուղի հիմնական դպրոց», «Ջրաձորի միջնակարգ դպրոց», «Գտաշենի միջնակարգ դպրոց», «Գոգհովիտի միջնակարգ դպրոց», «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց», «Ազատանի միջնակարգ դպրոց», «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց», «Մեծ Մանթաշի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններում իրականացված համակարգի գնահատման աուդիտի, «Ցողամարգի միջնակարգ դպրոց», «Ջաջուռի միջնակարգ դպրոց», «Առափիի միջնակարգ դպրոց», «Արևիկի միջնակարգ դպրոց», «Քեթիի միջնակարգ դպրոց», «Նոր կյանքի միջնակարգ դպրոց», «Արթիկի N 2 հիմնական դպրոց», «Անուշավանի միջնակարգ դպրոց» «Վարդաքարի միջնակարգ դպրոց», «Ախուրիկի բժշկական ամբուլատորիա», «Պեմզաշենի առողջության կենտրոն», «Սառնաղբյուրի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացված ֆինանսական աուդիտի, «Գյումրու արյան փոխներարկման կայան», «Գյումրու Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա», «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր», «Արթիկի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն», «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերություններում համակարգի գնահատման աուդիտի և «Բեռլին պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունում ֆինանսական աուդիտի արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հաշվետվությունները քննարկվեցին և կոմիտեն ընդունեց ի գիտություն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացված համակարգի գնահատման աուդիտի ընթացքում արձանագրված խախտումների և թերությունների վերաբերյալ քննարկումների արդյունքում կոմիտեն որոշեց՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին ներկայացնել առաջարկություն.

«Գյումրու պաթոլոգոանոտոմիական լաբորատորիա» փակ բաժնետիրական ընկերության իրականացված աուդիտի արդյունքները տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի դատախազություն՝ համապատասխան ընթացք տալու համար:

Կոմիտեի նախագահ՝
Կարեն Սարուխանյան

անդամներ՝
Վանիկ Սերոբյան
Ռուբեն Հարությունյան
Զորիկ Խաչատրյան
Մանուկ Մանուկյան

քարտուղար՝
Մուշեղ Մուրադյան